ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2020թ. թիվ 425-Ա՛

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2021Թ. ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թ. դեկտեմբերի 2-ի թիվ ՍՊ/15.2/33599-2020 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

Վ.Սուքոյան	-	Հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության պետ
Ա.Ամիրխանյան	-	Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ
Զ.Մարդանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԳԽՆՄ վարչության Տավուշի բաժնի պետ
Կ.Մկրտչյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ
Գ.Վիրաբյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ
Ա.Խաչատրյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ
Ն.Հարությունյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ

2. Հանձնարարել հանձնաժողովին /նախագահ Վ.Սուքոյան/ մինչև 2021թ. հունվարի 30-ը մարզում անցկացնել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանի վրա:

12/3/2020

X

ՄԱՐԶՊԵՏԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՏԵՂԱԿԱԼ Signed by: STEPANYAN TATUL 2501680073 Թ.
ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 3
Իջևան